ՄԵՐՁՍԵՎԱՆՅԱՆ ՑԵՂԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ՀՅՈՒՍԻՍ-ԱՐԵՎԵԼՔՈՒՄ (Մ. թ. ա. VI—V դդ.)

Ս. Գ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ուրարտական արձանագրություններում մ. թ. ա. 784 թ. սկսած բազմիցս հիշատակվում են Սևանա լճի ավազանում գտնվող Ueduri-Etiuni *ցեղամիությունը և նրա մեջ մտած առանձին ցեղային երկրները։ Վերջիններիցս ուրարտացիներին քաջ հայտնի էին «ծովից այսկույս» գտնվող այն չորսը՝* Uelikuni (Uelikuḫi), Lueruni, Adaḫuni *և* Arquqiuni, *որոնք գրավում էին լճի արևմտյան և հարավային ափամերձ շրջանների մեծ մասը*[1]։ *Սրանցից բացի, գոյություն ունեին «ծովից այնկույս» գտնվող 19 ուրիշ ցեղային երկրներ ևս*[2], *որոնք տեղագրվում են Հայկական ՍՍՀ Վարդենիսի, Կրասնոսելսկի և Շամշադինի շրջաններում, ինչպես նաև Ադրբեջանական ՍՍՀ արևմտյան մասում*[3]։

Մ. թ. ա. VIII դարի ընթացքում ուրարտական զորքերի կատարած մի շարք ավերիչ-ավարառուական արշավանքներից հետո Ueduri-Etiuni *ցեղամիությունը թուլանալով, մասնակիորեն հպատակվեց Վանի թագավորներին*[4]։ *Սակայն կարճ ժամանակ անց՝ մ. թ. ա. VII դարի սկզբին, մերձսևանյան ցեղերի այս միությունը որոշակի հաջողությունների էր հասել իր անկախության վերականգնման գործում։ Ուրարտուից ունեցած իր կախվածությունը թոթափելուց հետո նա հզորացման մի նոր շրջան թևակոխեց Ռուսա II-ի (684—645) գահակալության տարիներին, երբ վերջինիս զորքերը խարխլվել էին ոչ միայն Սևանի ավազանում, այլև արևմուտքից նրան հարող ցեղային այն երկրներում, որոնք նախկինում գտնվում էին ուրարտական տիրապետության տակ*[5]։ *Այս հանգամանքը նպաստավոր հանդիսացավ մերձսևանյան ցեղամիության աստիճանական ընդարձակման համար, որ իր առավելագույն չափերին հասավ հաջորդ՝ մ. թ. ա. VI—V դդ. ընթացքում։*

Ueduri-Etiuni *ցեղամիության նոր հզորացումը Ուրարտական պետության թուլացմանը և մինչ այդ նրա կազմում եղած հյուսիսային մի շարք ցեղային երկրների անջատմանը զուգընթաց տեղի ունենալու կապակցությամբ անհրաժեշտ ենք համարում մեջ բերել Ն. Վ. Հարությունյանի հետևյալ եզ-*

---

1 Г. А. Меликишвили, Урартские клинообразные надписи, М., 1960, 266, *տող 4—5 (այսուհետև՝* УКН); Гр. Капанцян, Историко-лингвистические работы, т. II, Ереван, 1975, *էջ 33—34, 80—83։* Н. В. Арутюнян, Биайнили (Урарту), Ереван, 1970, *էջ 200, 243, 263—265։*

2 УКН, *266, տող 6—12։*

3 Н. В. Арутюнян, Биайнили, *էջ 281—282։*

4 Б. Б. Пиотровский, Ванское царство (Урарту), М., 1959, *էջ 30—32։* Н. В. Арутюнян, Биайнили, *էջ 280—282։*

5 Н. В. Арутюнян, Новые урартские надписи Кармир-Блура, Ереван, 1966, *էջ 88—89։ Նույնի՝* Биайнили, *էջ 434—435։*

բափակիչ տողերը. «Այսպիսով, չնայած Աղա երկիրը (Արարատյան դաշտի ձախափնյակը—Ս. Պ.) իր էրեբունի, Արգիշտիխինիլի և Թեյշեբաինի նշանավոր կենտրոններով մնում էր Բիայնիլի-Ուրարտուի տիրապետության տակ՝ ընդհուպ նրա անկումը (590 թ. մ. թ. ա.?), այնուհանդերձ պետք է ընդունել, որ դեռևս Արգիշտի II-ի՝ Ռուսա II-ի հոր, ժամանակներից սկսած Ուրարտուի դիրքերը հյուսիս-արևելքում ևս նշանակալիորեն թուլացել էին։ Արգիշտի II-ը և Ռուսա II-ը, հավանաբար, այստեղ սկսել էին կորցնել տարածություն տարածության ետևից, այն է. Ազայից հյուսիս-արևելք մինչև Սևանա լճի ավազանն ընկած երկրները։

Ուրարտուի թուլացմանը և Ուդուրի-էթիունյան ցեղերի միության ուժեղացմանը զուգընթաց Վանի թագավորությունը հյուսիս-արևելքում, հավանաբար, ամփոփվեց Աղա երկրի տերիտորիալ սահմաններում։ Այնպես որ, մարա-սկյութական հարձակման ժամանակ Աղա երկրի անվտանգությունը, ըստ երևույթին, չէր ապահովվել նաև հյուսիսից՝ Ուդուրի-էթիունիի կողմից։

Թեյշեբաինիի կառուցումով Ռուսա II-ը, ակներևաբար, մտադիր էր ոչ միայն հետագայում ևս իր տիրապետությունն ապահովել Աղա երկրում, այլև ամրապնդել տարեցտարի թուլացող Ուրարտական պետության թիկունքը հյուսիս-արևելքից»[6]։

Որ մերձսևանյան Ueduri-Etiuni ցեղամիության հզորացումը ուղեկցվում էր նրա տարածքային ընդարձակմամբ, ցույց է տալիս Քիեխունի երկրի օրինակը։ Արարատյան դաշտի և Սևանի ավազանի հյուսիս-արևմտյան մասի միջև (այժմյան Հրազդանի շրջանը հարակից հողերով) տարածված ցեղային այս երկիրը Ուրարտական պետության թուլացման նույն այս ժամանակաշրջանում դուրս գալով նրա տիրապետության տակից՝ շուտով ընդգրկվում է մերձսևանյան ցեղամիության մեջ[7]։

Մ. թ. ա. VII—VI դդ., Ուրարտական պետության թուլացման ժամանակաշրջանում, մերձսևանյան ցեղամիության աստիճանական հզորացման և Սևանի ավազանի անձուկ սահմաններից դուրս գալու իրողությունը ենթադրել է տալիս, որ ցեղամիությունն իր հզորացման նոր փուլը թևակոխել էր նրա մեջ մտած ցեղային երկրներից մեկի շուրջ մյուսների համախմբման շնորհիվ։ Իսկ թե մերձսևանյան հայտնի 23 ցեղային երկրներից ո՞ր մեկը կարող էր լինել դա, մեզ հուշում է հետևյալ փաստը։

Uelikuni ցեղային երկիրը, որ համեմատաբար փոքր տարածություն էր զբաղեցնում Գավառագետի հովտում (ներկա Կամոյի շրջանում), ուներ 22 կիկլոպյան ամրոցներ[8]։ Ռուսա I-ը (730—714), նվաճելով այդ ամրոցները, դրանցից կենտրոնականը (այժմյան Կամո քաղաքի տարածքում) վերակառուցումից հետո վերանվանում է «Խալդի աստծու քաղաք»[9]։ Հավանաբար, Խալդին՝ ուրարտացիների գերագույն աստվածը, փոխարինել է այստեղ մերձսևանյան ցեղամիության գլխավոր աստծուն, որի անունն էր նախապես

---

[6] Н. В. Арутюнян, Бианили, էջ 325։

[7] Նույն տեղում, էջ 433, 434—435։

[8] УКН, 287. Ս. Գ. Բարխուդարյան, Վելիքուխի երկիրը, «Հայաստանի կուլտուրայի պատմության ինստիտուտի աշխատություններ», հատ. 1, Երևան, 1935, էջ 153—204։

[9] УКН, 265. Б. Б. Пиотровский, Ванское царство, էջ 32։ Գ. Հ. Միքայելյան, Ուելիքուխի երկրի կենտրոնական կիկլոպյան ամրոցը, «Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 1, էջ 119—132։

կրելու հիշյալ ամրոցը։ Իսկ այս հանգամանքը խոսում է արդեն մերձևանյան մյուս ցեղային երկրների համեմատությամբ Ueiikuni-ի ունեցած առանձնահատուկ դիրքի մասին։ Ըստ այսմ, նկատի առնելով ռազմական դեմոկրատիայի փուլում ապրող ցեղերի միություններին բնորոշ «արքայական ցեղի» ինստիտուտը[10], կարող ենք ենթադրել, որ մերձևանյան *u̯el ցեղը և նրա Ueiikuni ցեղային երկիրը համապատասխան ցեղամիության ներսում ունեցել է արտոնյալ վիճակ (որպես նրա «արքայական» ցեղի և «արքունի» երկրի)։

Մեր այս ենթադրության ճշմարտացիությունը կարող ենք հիմնավորել համադրելով ուրարտական ժամանակաշրջանի տեղանվանական տվյալները հայկականի հետ՝ միաժամանակ հենվելով իր անցյալի շուրջ հին հայերի հյուսիս-արևելյան հատվածի հյուսած (և Մովսես Խորենացու միջոցով մեզ հասած) ավանդազրույցների վրա։

Ուրարտական և հայկական ժամանակաշրջանների տեղանվանական տվյալների համադրումից պարզվում է, որ եթե մ. թ. ա. VIII—VII դդ. Uelikuni ցեղային երկիրը բռնում էր Սևանա լճի արևմտյան ափի կենտրոնական մասը միայն, ապա հայկական Գեղաքունի (Գեղարքունի) նույնանուն[11] գավառը ներառում էր լճից արևմուտք և հարավ ընկած շրջանների մեծ մասը՝ հատկապես նրանք, որոնք նախկինում կազմում էին Ueduri-Etiuni ցեղամիության «ծովից այսկույս» ընկած չորս ցեղային երկրների տերիտորիան[12]։ Ընդ որում Uelikuni>Գեղաքունի անվանումը դուրս էր մղել ոչ միայն մյուս երեք ցեղային երկրների անվանումները, այլ հատկացվել էր Սևանա լճին ևս, որը հին հայերին հայտնի էր Գեղամունեաց ծով անվամբ[13]։

Նշանակում է, մերձևանյան ցեղերի միավորման կենտրոնը՝ ցեղամիության «արքունի» երկիրը եղել է Uelikuni-ն։ Իսկապես էլ այս հանգամանքը պարզ կերպով արտացոլված է իր անցյալի շուրջ հին հայերի հյուսիս-արևելյան հատվածի հյուսած այն ավանդազրույցներում, որոնց մեջ կարևոր դերը պատկանում է Գեղամին՝ Գեղաքունի (<Uelikuni) երկրի և նրան իր անունը տված գեղ (*uel-) ցեղի էպոնիմին[14] (Գեղամ անունը պարունակում է նույն գեղ արմատը և -ամ անձնանվանակերտը. հմմտ. Արգամ, Կառնամ, Պասամ և այլն)։ Գեղամի և նրա ժառանգների վերաբերյալ Մովսես Խորենացին բերում է հետևյալ տեղեկությունները.

1 «Իսկ Գեղամ յետ ամաց անցանելոյ ծնաւ զՀարմայ յԱրմաւիր եւ թողեալ զՀարմայ յԱրմաւիր հանդերձ որգւովք բնակել, եւ ինքն գնաց զմիւս լերամբ արեւելեան հիւսիսոյ, յեղր ծովակի միոյ։ Շինէ զեղր ծովակին, եւ

---

10 Հիշենք «արքայական սկյութներին» սկյութական ցեղամիության մեջ, Արշակունիների ապան ցեղին՝ դահականի մեջ, ասիականներին՝ թոխարականի մեջ։

11 Գր. Ղ ա փ ա ն ց յ ա ն, Ուրարտուի պատմությունը, Երևան, 1940, էջ 182, 187, 196։ Гр. Капанцян, նշվ. աշխ., էջ 33—34, 82։

12 Ս. Տ. Ե ր ե մ յ ա ն, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, Երևան, 1963, էջ 47։

13 «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1913, Ա, ԺԲ։

14 Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, Ереван, 1971, էջ 303։ Гр. Капанцян, նշվ. աշխ., т. I, Ереван, 1956, էջ 187։

թողու անդ բնակիչս. եւ յիւր անուն եւ սա զլեառնն անուանէ Գեղ, եւ զշէնսն՝ Գեղարքունի, որով կոչի եւ ծովն»[15]։

2 «Աստ ծնաւ (Գեղամը) զորդի իւր զՍիսակ, զայր սէգ եւ անձնեայ, բարեգեղ, կորովաբան եւ գեղեցկաղեղն։ Սմա զմեծ մասն ընչից իւրոց տուեալ եւ ծառայս անձինս բազումս՝ սահմանս հատանէ նմա ժառանգութեան ի ծովէն ընդ արեւելս մինչեւ ցդաշտ մի, ուր գետն Երասխ հատեալ զքարանձաւս լերանց՝ անցանէ ընդ խոխոմս ձիգս եւ նեղս, ահագին դնդնչմամբ իջանէ ի դաշտն։ Աստ բնակեալ Սիսակ՝ լնու շինութեամբ զսահմանս բնակութեան իւրոյ. եւ զաշխարհն կոչէ իւրով անուամբն Սիւնիք. այլ Պարսք յստակագոյնս եւս Սիսական կոչեն։ Ի սորա ծննդոց աստ ուրեմն Վաղարշակ, որ առաջին ի Պարթեւաց արքայ Հայոց, գտեալ արս անուանիս՝ տեարս աշխարհին կարգէ, որ է Սիսականդ ազգ. եւ զայս առնէ Վաղարշակ՝ ի պատմութենէն ստուգեալ»[16]։

3 «Բայց ինքն Գեղամ դառնայ անդրէն ի դաշտ անդր, եւ առ ոտամբ նորին լերինն ի ձորակի միում ամրոջ շինէ ձեռակերտ մի, եւ կոչէ զանուն նորա Գեղամի, որ յետոյ ի Գառնկայ թոռանէ նորա անուանեցաւ Գառնի»[17]։

4 «Իսկ զԴատ ի զաւակէ Գառնկայ, որ ի Գեղամայ, ի վերայ որսոց արքունականաց կարգէ (Վաղարշակը)։ Որոյ որդի եղեալ Վարժ՝ յանուն նորա անուանի ազգն. բայց այս զկնի, յաւուրս Արտաշիսի»[18]։

5 «Ի սորա ծննդոց աստ ուրեմն առ Արտաշիսաւ թոռամբ Վաղարշակայ ոմն Վարաժ անուն պատանի լեալ, աջող յորս եղջերուաց եւ այծեմանց եւ վարազուց, դիպաձգութեամբ նետից կորովի զսա ի վերայ որսոց արքունականաց կարգէ, եւ շէնս պարգեւէ նմա առ եզերբ գետոյն, որ անուանեալ կոչի Հրազդան։ Եւ ի սմանէ ասեն լինել զտունն Վարաժնունի»[19]։

6 «Իսկ զՌշտունիս եւ զԳողթնեցիս գտի պատմեալ ի Սիսականէն արդարեւ հատուած. ոչ գիտեմ, թէ յանուն արա՞նցն զդաւառսն անուանեալ, եւ թէ յանուն գաւառացն զնախարարութիւնսն կոչեցեալ»[20]։

Ինչպես ցույց են տալիս բերված հատվածները, ժամանակին գեղ ցեղի գլխավորած մերձսևանյան միության (այն պայմանականորեն կարելի է կոչել նաև «Գեղամի ցեղամիություն») մեջ են ընդգրկված եղել Սևանի ավազանին հարող հետևյալ երկրները ևս. հյուսիսում՝ հետագա Վարաժնունիքը մինչև Գուգարք, արևմուտքում՝ Գառնիի շրջակայքն ու Հրազդան գետի վերին հոսանքի շրջանը մինչև Արարատյան դաշտ[21], իսկ հարավում՝ հետագա Սյունիքն ու Գողթնը մինչև Արաքս։

---

15 Խորենացի, Ա, ժբ։
16 Նույն տեղում։
17 Նույն տեղում։
18 Նույն տեղում, Բ, է։
19 Նույն տեղում, Ա, ժբ։
20 Նույն տեղում, Բ, բ։
21 Վերջինիս կորիզը կազմող Քիխիունի երկիրը մերձսևանյան ցեղամիության մեջ ընդգրկվել էր դեռևս մ. թ. ա. VII դարում (տե՛ս Н. В. Арутюнян, Биайнили, էջ 433—435)։ Թերևս, մերձսևանյան ցեղերի այս ուղղությամբ տարածվելու հետևանքը լինի այժմյան Հրազդանի շրջանի հարավ-արևմուտքում գտնվող Աղվերան բնակավայրի անվանումը։ Եթե միայն, Աղվերան<*աղուեր-ան, իսկ աղուեր=luer (հմմտ. «ծովից այսկույս» գտնվող երկրներից մեկի Lueruni<luer-uni? անվան հետ)։

Դեռևս հայ ժողովրդի կազմավորման ավարտից առաջ մերձևանյան ցեղամիության այս վերջին ուղղությամբ ընդարձակված լինելու մասին են վկայում մի շարք տեղանվանական տվյալներ ևս։ Դրանցից հատուկ ուշադրության են արժանի հարավային Սյունիքի տեղանուններից երկուսը՝ Դեղաքունի և Արքոյքա (բնակավայրեր էին Բաղք և Ճահուկ գավառներում[22])։ Դրանք համահնչուն են Uedurı-Etıuni-ի «ծովից այսկույս» գտնվող ցեղային երկրներից երկուսի Uelikunı (Գեղաքունի) և Arquqıunı (Arquaını) անվանումներին[23]։ Ինչպես Գր. Ղափանցյանն էր նշում, Սյունիքի հիշյալ տեղանունները ժամանակագրական տեսակետից երկրորդային են մերձևանյան համապատասխան երկրանունների համեմատությամբ[24]։ Նշանակում է, մ. թ. ա. VI—V դդ. ընթացքում մերձևանյան ցեղամիության դեպի հարավ ընդարձակվելուն զուգընթաց Ուելիկունի (Գեղաքունի) և Արքուքինի ցեղային երկրների հիմնական բնակչությունը հանդիսացած էթնիկական տարրի առանձին հատվածներ ևս շարժվել են հարավ՝ բնակություն հաստատելով հետագա Սյունիքի տարածքում։

Այս տեղաշարժերի կապակցությամբ խիստ ուշագրավ են հետևյալ երկու հանգամանքները։ Նախ. Սյունի-Սիսական նախարարական տոհմի էպոնիմ-նախնի Սիսակը ազգակցական-ժառանգական սերտ կապի մեջ է Գեղաքունի երկրի և նրան իր անունը տված գեղ ցեղի էպոնիմ Գեղամի հետ (ընդ որում, հին հայկական ավանդաղրույցներում այս հարցն արծարծվել է հենց Գեղաքունի երկրի առնչությամբ. Գեղամը «աստ ծնաւ զորդի իւր գՍիսակ» և նրան «զմեծ մասն ընչից իւրոց տուեալ»)[25]։ Ապա. հենց մերձևանյան շրջանների հետ է կապվում նաև այս տոհմի Սյունի<Սիւնի, որից Սյունիք<Սիւնիք անվանումը, որովհետև վերջինիս «ավելի արխաիկ ընթերցումն է «Սեւնիք», որից առաջացել է այժմյան «Սեւան» անունը»[26]։

Որոշակի տվյալներ կան մերձևանյան ցեղերի միության՝ արևելյան ուղղությամբ ևս ընդարձակված լինելու վերաբերյալ։ Այս տեսանկյունից նայելիս է իր իսկական բացատրությունն ստանում հետագա Գարդման-Շակաշենում բնակված հայերի միջնադարյան սեւորդիք անվանումը, որը մեր պատմիչները բխեցնում էին սրանց իշխող տոհմի ոմն նահապետի Սեւ կամ Սեւուկ անունից[27]։ Անկասկած, սա ոչ թե իրականում գոյություն ունեցած անձնավորություն էր, այլ հայերի սեւորդիք կոչված ազգագրական խմբի՝ անձնավորման ենթարկված բանահյուսական կերպարը, նրա էպոնիմ-նախնին (հմմտ. գեղ և Գեղամ, կաղմուխ և Կաղմոս, քարթվել և Քարթլոս և այլն)։ Իրականում, թե՛ Սեւ (Սեւուկ), թե՛ սեւորդի-ք անվանումները[28] վկայություն-

22 «Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական», Մոսկվա, 1861, ՀՐ. ը, ժդ։

23 Հմմտ. նաև Սյունիքի Միւս Բաղք գավառի Աբխոյք (<*Ադխ-ոյք?) բնակավայրի անվանումը (նույն տեղում, ՀԳ, թ) «ծովից այսկույս» գտնվող չորրորդ ցեղային երկրի Adahuni (<adah-uni?) անվան հետ։

24 Гр. Капанцян, նշվ. աշխ., հատ. II, էջ 172։

25 Խորենացի, Ա, ժբ։

26 Ս. Տ. Երեմյան, Ն. Մառը և VII դարի հայոց «Աշխարհացույց»-ը, «Մառը և հայագիտության հարցերը», Երևան, 1968, էջ 81։

27 «Վարդանայ վարդապետի Պատմութիւն», Վենետիկ, 1862, ԽԳ։ «Պատմութիւն Յովհաննու կաթողիկոսի», Երուսաղեմ, 1867, ԻՁ, ԼԷ։

28 Սեւ (Սեւուկ) և սեւորդիք անվանումները ծագումնաբանական կապ չունեն հայերեն

ներն են դրանց կրողների ինչպես մերձսևանյան շրջանների, այնպես էլ Սյունիքի հետ ունեցած առնչության։

Այս առնչությունը դեռևս անցյալ դարի վերջերին արժանացել էր Ղ. Ալիշանի ուշադրության։ Դրա արդյունքն են նրա հետևյալ տողերը. «...Սեւուկ անուն նահապետ մի լինել, յորմէ եւ Սեւորդեացն ազգ, դրակից Սիւնեաց. աստ-ուստ թերեւս եւ անուն կղզւոյ ծովուն Գեղամայ Սեւան, եւ ի սմանէ Սիւնիք՝ իբր Սեւունիք (ընդգծումները մերն են—Ս. Պ.)»[29]։ Փաստորեն, գործ ունենք միևնույն *սեւ արմատի երեք առանձին տեղայնացումների հետ. առաջինը՝ մերձսևանյան շրջանում (Սեւ-ան), երկրորդը՝ Սյունիքում (Սեւ-նի >Սիւ-նի, որից Սեւնիք>Սիւնիք), երրորդը՝ Գարդման-Շակաշենում (Սեւ կամ Սեւ-ուն և սեւ-որդի-ք)։ Քանի որ հիմք-անվան *սեւ-ը ունի մերձսևանյան ծագում, ուստի նրա հայտնվելը ինչպես Սյունիքի, այնպես էլ Գարդման-Շակաշենի տարածքներում պետք է բացատրվի Սևանի ավազանի ցեղերի՝ դեպի հարավ (Սյունիք) և արևելք (Գարդման-Շակաշեն) կատարած տեղաշարժերով։

Մերձսևանյան ցեղերի արևելյան ուղղությամբ կատարած տեղաշարժերի մասին են վկայում տեղանվանական տվյալները ևս։ Դրանցից պետք է ամենից առաջ նշել Ծաւդէք անվան հնում Արցախի վրա տարածված լինելու փաստը[30]։ Այս անվան տարբերակներով (Ծաւդք, Սաւդք, Զաւդք, այժմ՝ Զոդ <Զօդ<Զօդք<Զաւդք) նախապես կոչվել է միայն Սևանա լճից արևելք և հարավ-արևելք ընկած երկիրը՝ հետագայի «Ծաւդէացւոց իշխանութեան» կենտրոնը[31]։ Իշխանությունը գլխավորած «Ծաւդէացի» հին հայկական նախարարական տոհմը ազգակից էր Գարդմանն-Շակաշենում իշխած «Գարդմանացի» տոհմին՝ նրա հետ միասին սերված համարվելով Սիսակի զարմ Առանից[32] (իսկ Սիսակը, ինչպես վերևում տեսանք, Սյունի-Սիսական նախարարական տոհմի էպոնիմ-նախնին էր՝ ծնված մերձսևանյան Գեղաքունի երկրում)[33]։

Այսպիսով, Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելքում ուրարտական դերիշխանության վերացումից հետո վերստին զորեղացած մերձսևանյան ցեղամիությունը հաջորդ՝ մ. թ. ա. VI—V դդ. ընթացքում աստիճանաբար իր իշխանությանն է ենթարկում լեռնաշխարհի նորանոր շրջանները՝ հյուսիսում հասնելով մինչև Գուգարք, արևմուտքում՝ Արարատյան դաշտ, հարավում՝ մինչև Արաքս, իսկ արևելքում՝ Կուր-Արաքսյան հարթավայր։

«սև» (<սեաւ<իրան. syāva «սև») բառի հետ։ Դրանք հույնիմաստ են ընկալվել հետագայում՝ ծնելով ժողովրդական «սև որդիներ» ստուգաբանությունը։

29 Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 6։

30 Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 294; Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 80։

31 Ս. Տ. Երեմյան, «Ծաւդէացւոց իշխանութիւն», ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ), 1960, № 7—8, էջ 51։

32 Ինչպես Խորենացին է վկայում. «Եւ ի սորա (Սիսակի) ծննդոց այս Առան անուանի եւ բաջ կարգեցաւ կողմնակալ բիւրաւոր ի Պարթեւէն Վաղարշակայ։ Ի սորա գաւակաց ասեն սերեալ զազգն Ուտէացւոց եւ Գարդմանացւոց եւ Ծաւդէացւոց եւ Գարդարացւոց իշխանութիւնսն» (Խորենացի, Բ, ը)։

33 Մերձսևանյան ցեղերի արևելյան ուղղությամբ կատարած տեղաշարժերի վկայությունները պետք է համարել նաև «Սաւդից գավառի» համար բնորոշ -բակ տեղանվանակերտով կազմված տեղանունների առկայությունը արևելքից նրան հարող շրջաններում ևս (տե՛ս Ս. Ս. Յունեցի, ԼԳ, ե)։

Մովսես Խորենացու հաղորդած վերոբերյալ հին հայկական ավանդապրույցներից պարզվում է, որ Հայկազն Գեղամը՝ մերձսևանյան ցեղամիության (և առաջին հերթին նրա իշխող գեղ ցեղի) էպոնիմը, համարվում էր հայրը ոչ միայն Սիսակի, այլև Հարմայի։ Վերջինիս թե՛ անունը և թե՛ Արմավիրում իշխելու հանգամանքը[34] (երբ՝ Արմաւիր<Արմա-ւիր, այսինքն՝ «արմա-ցեղ»)[35] հուշում են, որ նա էպոնիմն է Արարատյան դաշտում բնակված արմենական (արմ-ական) էթնիկական տարրի։ Այս առումով պատահական չէ, որ Մովսես Խորենացին Հարմայի որդի (ուրեմն և՝ Գեղամի թոռ) Արամի անունից է բխեցնում հայերին և Հայաստանին օտարներից տրված արսեն, Արմենիա անվանումները[36]։

Ասվածները թույլ են տալիս մերձսևանյան ցեղամիության (էպոնիմը՝ Գեղամ) իշխող ցեղերը համարել արևելաարմենական ցեղերին (էպոնիմները՝ Հարմա և Արամ) ազգակից հնդեվրոպական ցեղեր։ Ընդ որում, նրանց մի մասը, արմենական ցեղերի հետ միասին, պատկանելու էր հայերենակիր այն էթնիկական տարրին (հայերի լեզվական նախնիներ), որը որոշիչ դեր է խաղացել հայերենը Հայկական լեռնաշխարհի նախ՝ միջցեղային հաղորդակցման միջոց, ապա և՝ ընդհանուր խոսակցական լեզու դարձնելու գործում։ Այս պատճառով է հենց, որ հայ ժողովրդական հնագույն ավանդապրույցներում մերձսևանյան ցեղամիության էպոնիմ Գեղամը արմենների էպոնիմների (Արամանյակ, Արամայիս, Հարմա, Արամ[37]) հետ միասին ընդգրկվել է Հայկի՝ կազմավորված հայ ժողովրդի ընդհանուր էպոնիմ-նախնու, սերունդների ուղղագիծ տոհմաբանության մեջ։

Այս հարցի առնչությամբ տեղին է հիշել Երեմիայի բառարանում որպես «հայ» անվան հոմանիշներ հանդես եկող գեղնի (գղնի) և գեղնիկ բառերը[38]։ Դրանք ուղղակիորեն առնչվելով գեղ–Գեղամունի–Գեղամ ծագումնաբանական փոխադարձ կապերի մեջ գտնվող շարքին, պետք է դիտվեն որպես հայության միայն մի հատվածին (ազգագրական խմբին) հատկացված անվանումներ։ Ըստ երևույթին, գեղնի, գեղնիկ[39] կոչվել է հայ ժողովրդի հյուսիս-արևելյան այն հատվածը, որի նախնիները (ինչպես իշխող հնդեվրոպական, այնպես էլ նվաճված հինկովկասյան ցեղերը) ժամանակին մտնում էին «Գեղամի ցեղամիության», այսինքն՝ գեղ ցեղի գլխավորած մերձսևանյան միության մեջ։

Մերձսևանյան միության իշխող ցեղերի էթնիկական պատկանելության հարցը պարզաբանելիս մենք որպես ուղեցույցներ ենք ընդունում մի կողմից՝

---

[34] Այս Գեղամ, որպէս ասացաք, յետ ամաց կենաց իւրոց ծնաւ զՀարմայ, յետ որոյ կեցեալ եւ այլս եւս՝ եւ մեռաւ։ Եւ հրամայեաց որդւոյ իւրում Հարմայ բնակել յԱրմաւիր» (Խորենացի, Ա., ժբ)։

[35] Գր. Քալանթարյան, նշվ. աշխ., հատ. I, էջ 183—184։

[36] «Իսկ Հարմայ կեցեալ ամս՝ ծնաւ զԱրամ։ Արամայ բազում գործք քաջութեան պատմին մարտից նահատակութեանն, եւ ընդարձակեաց զսահմանս Հայոց յամենայն կողմանց. որոյ անուն եւ զաշխարհս մեր անուանէն ամենայն ազգք, որպէս Յունք՝ Արմէն, իսկ Պարսիկք եւ Ասորիք՝ Արմենիկոն» (Խորենացի, Ա., ժբ)։

[37] Գր. Քալանթարյան, նշվ. աշխ., հատ. I, էջ 179։

[38] Երեմիա վարդապետ, Բառգիրք հայոց, Յալիկոնայ, 1698, էջ 63, 67։

[39] Գեղնի, գեղնիկ անվանումների մեջ առկա -նի և -նիկ մասնիկները ցեղանվանակերտներ են (հմմտ. *սեւ ՝ Սեւնի>Սիւնի, արմ. և արմենի, արմենիկ-ի և այլն)։

թրակա-փռյուգա-հայերենակիր ցեղերի (հինթրակյան ցեղեր[40]) դեռևս մ. թ. ա. XII դարում Հայկական լեռնաշխարհ թափանցելու փաստը՝, մյուս կողմից՝ մերձսևանյան Ueduri-Etiuni ցեղամիության և նրա «ծովից այսկույս» տարածված ցեղային չորս երկրների վերաբերյալ Ս. Տ. Երեմյանի գրած հետևյալ տողերը. «Ueduri-Etiuni անվան ստուգաբանությունը կապվում է թրակական ցեղերի ներթափանցման հետ Անդրկովկաս և Հայաստան դեռևս VIII դարում մ. թ. ա.։ Ueduri-Etiuni անունն էին կրում Սևանա լճի ավազանում գտնվող Ուելիկուխի (Ուելիկունի), Լուերունիվ, Ադարունիվ և Արբուքիվ չորս «մերձլճյա երկրները»... Անհրաժեշտ է հիշել, որ βέδυ թրակերենում նշանակում է «ջուր», հավանորեն *vetu(r), որը ծագում է ընդհանուր հնդեվրոպական <*uedō(r) արմատից։ Թրակական այս բառը հիմք է տալիս ենթադրելու, որ Ueduri-Etiuni պետք է նշանակի «մերձլճյա (մերձծովյա) Լտիունի», ճիշտ այնպես, ինչպես Մովսես Խորենացին (Բ, դ) Սևանի առափնյա բնակիչներին անվանում է «ծովեզերեայս»[42]։

Ասվածներից ելնելով, մենք հակված ենք հինթրակյան (թրակա-փռյուգա-նախահայկական ընդհանրությունը) ծագում վերագրելու մերձսևանյան ցեղամիության իշխող ցեղերին՝ ի թիվս որում և ցեղամիության «արքայական» գեղ (<*ue̯l) ցեղին, որի երկիրը (Գեղաքունի<Uelikuni) կատարել էր Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելքի ցեղային մյուս երկրները համախմբած կենտրոնի դերը։

Գեղ (<*uel) ցեղի հնդեվրոպական-հինթրակյան ծագման ապացույց կարող է ծառայել նրա անվան ստուգաբանությունը։ Անունն առնչվում է մի կողմից հայերենի (մոռացության մատնված) գեղ=գաղ «մեծ, խոշոր», իսկ մյուս կողմից՝ ռուսերեն велий, великан, великий բառերի հետ[43]։ Մինչդրա-

---

40 Հայ ժողովրդի կազմավորման նախադրյալ ժամանակաշրջանի համար Ստրաբոնը, որն օգտվել է ավելի հին աղբյուրներից, «թրակական» ցեղեր է հիշատակում Հայկական լեռնաշխարհի հյուսիսային, հյուսիս-արևելյան և արևելյան մասերում (տե՛ս Strabo, XI, XIV, 14; XI, V. 2)։

41 Н. М. Дьяконов, Предыстория армянского народа, Ереван, 1968. էջ 117—119, 123—124։ «Հայ ժողովրդի պատմություն», հատ. Ա, Երևան, 1971, էջ 230—237։ Նույնի՝ Հայ ժողովրդի կազմավորման ընթացքը, «Պատմա-բանասիրական հանդես», 1970, № 2, էջ 37—43։ Նույնի՝ Հայկական առաջին պետական կազմավորումները, «Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 3, էջ 92։

42 Ս. Տ. Երեմյան, Ն. Մառը և VII դարի հայոց «Աշխարհացույց»-ը, էջ 81—82։

43 Հնդեվրոպական ազգակից մյուս լեզուներում ևս առկա է այս արմատը։ Թոխարական դույզ լեզուները (A և B) ունեն wal, walo «արքա, իշխան», բալթյան լեզուները (լիտվերեն և լատիշերեն)՝ valia, vala «ուժ, իշխանություն» նույնածագում բառերը (տե՛ս М. Фасмер, Этимологический словарь русского языка, т. I, М., 1964, էջ 289)։ Ըստ երևույթին, սրանց մեկ ուրիշ զուգահեռն է ներկայացնում փռյուգական արքաների βαλάν (*valen —վաղէն-ա՞կ>Վաղինակ) տիտղոսը, որը հին հույները թարգմանում էին «արքա» (Древнегреческо-русский словарь, т. I, М., 1958, էջ 286)։ Հավանաբար, դահական-պարթևական (թոխարական փոխառությո՞ւն) իրականությանը ևս ծանոթ էր *val արքայական տիտղոսը՝ առկա Վաղարշակ գահանվան մեջ։ Դահանունը նշանակելու էր *Վաղ-Արշակ, այսինքն՝ «արքա Արշակ» (այս առումով հետաքրքրական է, որ հայ Արշակունիների արքայատոհմի ավանդական հիմնադիրը պատմիչների երկերում կոչվում է մերթ Վաղարշակ, մերթ Արշակ)։ Ըստ այսմ, ռազմական դեմոկրատիայի փուլում ապրող ցեղերի միություններին բնորոշ «արքայական ցեղի» ինստիտուտի իրողությունից ելնելով, կարող ենք մերձսևանյան գեղ<*ue̯l ցեղի և նրա Գեղաքունի (Uelikuni) երկրի նույնածագում անվանումները համարել վկայությունները այս ցեղի և նրա ցեղային երկրի՝ ցեղամիության ներսում ի սկզբանե ունեցած արտոնյալ վիճակի։

քարյան հայերենում գեղ=գաղ (<*ueĭ-) արմատի գոյության փաստն են արձանագրել գրաբարյան գեղարդն և գաղգաղել բառերը. գեղարդն «մեծ նիզակ» (երբ՝ արդն «նիզակ, տեգ»)[44], իսկ գաղգաղել՝ «խոշորել» (կրկնաբանությամբ գաղ արմատից)[45]։

Մեր կարծիքով, մերձսևանյան ցեղամիության՝ հինթրակյան ցեղերի գլխավորությամբ կազմավորված լինելու մասին է վկայում Ստրաբոնի այն հաղորդումը, որի մեջ խոսվում է նաև Անդրկովկասում «ամազոնների և «էվբեյացիների» հարևանությամբ բնակված «թրակացիների» մասին։ Ահա այն. «Գարգարացիները ամազոնների հետ, ինչպես ասում են, այս տեղերն (հետագա Աղվանքից հյուսիս—Ս. Պ.) են հասել Թեմիսկիրեից։ Բայց հետո նրանք ապստամբություն բարձրացրին և սկսեցին կռվել ամազոնների դեմ ինչ-որ թրակացիների և էվբեյացիների հետ միասին (որոնք իրենց քոչերով հասել էին մինչև այդ տեղերը)։ Այնուհետև, դադարեցնելով պատերազմը՝ նրանք հաշտություն կնքեցին վերոհիշյալ պայմաններով. իրար հետ կշփվեն միայն երեխաներ ունենալու համար, իսկ կապրի յուրաքանչյուր ցեղ ինքնուրույն կերպով»[46]։

Դախ. այստեղ հիշատակված ցեղերի մասին։ Դրանցից գարգարացիները (գարգարները) չեչենա-ինգուշների նախնիներից էին և բնակվում էին Կովկասյան գլխավոր լեռնաշղթայի հյուսիսային փեշերին[47]։ Նրանց հարևան ամազոնները հետագա Աղվանքի հյուսիս-արևմուտքում բնակված ալազոններն են (սրանց անունն է կրում Ալազան գետը), որոնք ամազոններ են դարձել հունական առասպելաբանության ազդեցությամբ՝ ամազոն և ալազոն անվանումների հնչյունական նմանության հողի վրա (Ἀμαζόνες < Ἀλαζόνες[48])։ Նույն կերպ, գրական միջնորդության հետևանքով են բերված հատվածում հայտնվել էվբեյացիները։ Հունական էվբեյա կղզու հնագույն բնակիչները կոչվում էին արանտներ (Ἄβαντες), իսկ կղզին ինքը՝ Արանտիա (Ἀβαντίς[49])։ Այս անվանումները շատ մոտ են հնչում հետագա Մեծ Հայքի Սյունիք և Արցախ նահանգների Հարանդ ու Մեծ Հարանդ կոչված կից գավառների անվանումներին[50]։ Հենց այս Հաբանդների բնակիչներին է իրականում վերաբերելու Ստրաբոնի կողմից աբանտ-էվբեյացիներին վերագրված վերոհիշյալ տեղեկությունը։

Ինչ վերաբերում է Հաբանդի բնակիչների հետ միասին որպես գարգարացիների դաշնակիցներ ամազոն-ալազոնների դեմ հանդես եկած «ինչ-որ թրակացիներին», ապա դրանք լինելու էին Հաբանդների (այսինքն՝ հարավարևելյան Սյունիքի և հարավային Արցախի) ու հյուսիս-արևմտյան Աղվանքի (որտեղ ապրում էին ալազոնները) միջև բնակված այն ցեղերը, որոնք մ. թ. ա. VI—V դդ. մտնում էին մերձսևանյան ցեղամիության մեջ[51]։

---

44 Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հատ. Ա, Երևան, 1971, էջ 309, 533։
45 Երեմիա վարդապետ, Բառգիրք հայոց, էջ 60։
46 Strabo, XI, V, 2.
47 В. Б. Виноградов, Тайны минувших времен, М., 1966, էջ 117—122։
48 К. В. Тревер, Очерки по истории и культуре Кавказской Албании IV в. до н. э.—VII в. н. э., М.—Л., 1959, էջ 50։
49 Древнегреческо-русский словарь, т. I, էջ 13։
50 Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 61, 70։
51 Ըստ երևույթին, տվյալ դեպքում նկատի պետք է առնվեն ոչ թե մերձսևանյան ցե-

Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան շրջաններում հինթրակյան էթնիկական տարրը հաստատվել էր նաև հյուսիսից կատարած տեղաշարժերի միջոցով։ Դրանցից էին, օրինակ, կիմերների, տրերների և նրանց ազգակից մյուս ցեղերի այն հատվածները, որոնք Հյուսիսային Կովկասից Անդրկովկաս ներխուժելուց հետո՝ այստեղ էին ապաստանել սկյութների ճնշման տակ (մ. թ. ա. VIII—VII դդ.)[52]։ «Այս կապակցությամբ,—գրում է Ս. Տ. Երեմյանը,— հետաքրքրություն է ներկայացնում հենց Թրիալեթի, հայկ. Թռեզք, անունը (այժմ Ծալկայի շրջանը, Գոմարեթիից հյուսիս)։ Այս անվան ավելի արխաիկ ձևը պետք է լինի «թրիար» (< «թորի+ար»), որը պահպանվել է Պլինիոսի մոտ՝ regio Thriare։ Վրացերենի տեսակետից այս վերջինիս օրինաչափ ձևն է «Թրիալ-եթի»։ Այս նույն էթնիկական անունը պահպանվել է Թարթառ գետի հովտում, հենց այդ գետի անվան հնագույն ձևում՝ Տրտու, Տրտուական և նույն տեղում գտնվող Տրի գավառի անվան մեջ (ուրարտ. Teriani, միջին դարերում Ջրաբերդ գավառը)։ Մեջ բերված անուններում պահպանվել է տրերների՝ թրակական ցեղերից մեկի անունը»[53]։

Ընդհանրապես, հայերենակիր էթնիկական տարրին ազգակից և Հայկական լեռնաշխարհ հյուսիսից թափանցած ցեղերի (ի թիվս որում և «թրակակիմերների»)՝ հայ ժողովրդի էթնոգենեզիսին բերած մասնակցությունը իր դրոշմն էր թողնելու (և թողել է) նաև հայոց լեզվի վրա։ Այս հարցի կապակցությամբ ուշագրավ են Գ. Բ. Ջահուկյանի այն տողերը, որոնք վերաբերում են հայերեն հարաւ բառի և նրա իրանական paurva համարժեքի ստուգաբանությանը։ Վերջինիս «... սկբնական իմաստն է «առաջին», որը հետագայում ստացել է նաև «հարավային» իմաստը։ Հետազոտողները բառիմաստի այսպիսի անցումը բացատրում են նրանով, որ իրանական ցեղերի վաղ շարժման ուղղությունը եղել է հարավ, այսինքն՝ «առաջ շարժվել» և «հարավ շարժվել» նշանակել են նույն բանը։ Ավեստյան բառի աղբյուրն է հ.-ե. per- արմատից կազմված *perəu̯o- բաղադրությունը, որը հավասարապես կարող էր տալ հայ. հարաւ (սեռ. հարաւու) բառը... ներկա ստուգաբանությունը հիմք է տալիս հայերի՝ դեպի հարավ կատարած (իրանական ցեղերի հետ միասի՞ն) վաղ տեղաշարժեր ենթադրելու համար»[54]։ Այսպիսի մի եզրակացության է հանգեցնում նաև հայերեն առաջ բառի ստուգաբանությունը։ Բառն ինքնին նշանակում է «դեպի աջ», սակայն այստեղ «աջ»-ի տակ պետք է նկատի առնել հենց «հարավ»-ը։ Հայտնի է, որ հնում բոլոր արևապաշտ ժողովուրդների համար գործածական էր դեպի արևելք կողմնորոշումը։ Համաձայն այս կողմնորոշման, «հյուսիսը» նույնանում է «ձախ», իսկ «հարավը»՝ «աջ» հասկացությունների հետ[55]։ Բնականաբար, հարավ-աջ կողմը «առջև» կարող էր

դամիության մեջ մտած ցեղերն ընդհանրապես, այլ այդ ցեղերից նրանը, որոնք հանդիսանում են հետագայում այդ նույն տարածքում (Հաբանդների և հյուսիս-արևմտյան Աղվանքի միջև), այսինքն՝ Դարդման-Շակաշենում բնակված սևորդիների նախնիները։

52 Ս. Տ. Երեմյան, Կիմերական և սկյութական ցեղերի արշավանքները և Ուրարտուի ու Ասորեստանի պայքարը քոչվորների դեմ, «Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 2, էջ 92։

53 Նույն տեղում (դուցե թե տրերների ցեղանվան հետ են առնչվում նաև Սյունիքի Տրլոուի և Տրեաւ տեղանունները—Ս տ. Սյունեցի, ՀԳ, ե, թ)։

54 Գ. Բ. Ջահուկյան, Ստուգաբանություններ, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1973, № 6, էջ 20—21։

55 Այսպես օրինակ, արաբերենում նմեն տեղանունը բառացիորեն նշանակում է «աջի

լինել միայն նրանց համար, որոնք շարժվում էին դեմքով դեպի հարավ-աջ ուղղությամբ, այսինքն՝ գալիս էին հյուսիս-ձախ կողմից։ Իսկ դա հենց այն ուղղությունն էր, որով հայկական լեռնաշխարհ էին թափանցել թրակա-կիմերական ցեղերը։

Անտարակույս, մերձևանյան ցեղամիության իշխող հինթրակյան ցեղերի մեջ (հատկապես նրա գոյության երկրորդ փուլում՝ մ. թ. ա. VI—V դդ.) գերակշռողը եղել են հայերենակիր ցեղերը՝ հայերի լեզվական նախնիները։ Առաջին հերթին սրանով պետք է բացատրել նախկինում այս ցեղամիության մեջ մտած շրջանների բնակչության արագ հայացումը Երվանդունիների Այրարատյան թագավորության գոյության ժամանակաշրջանում (մ. թ. ա. IV—III դդ.)[56]։ Մյուս պատճառներից կարելի է նշել ցեղամիության հայերենակիր ցեղերին և նրանց թրակա-փռյուգական ազգակիցներին այն ժամանակաշրջանի համար բնորոշ սերտ կապը ինչպես լեզվի[57], այնպես էլ կենցաղի, հասարակական ինստիտուտների և դիցաբանության-գաղափարախոսության բնագավառներում։

Այսպիսով, բավականաչափ տվյալներ ունենք Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելքում հինթրակյան (թրակա-փռյուգա-նախահայկական) ցեղերի առաջին ալիքի թափանցման ժամանակաշրջանը թվագրելու մ. թ. ա. VIII դարով, այսինքն՝ այն ժամանակաշրջանով, որն անմիջապես նախորդում է նրանց գլխավորած մերձևանյան միության գոյության առաջին («ուեդուրի-էթիունյան»—մ. թ. ա. VIII—VII դդ.) փուլին։ Հայ ժողովրդի կազմավորման պրոցեսի մեջ նրանց ընդգրկումը պետք է թվագրել մ. թ. ա. VI—V դդ., այսինքն՝ այն ժամանակաշրջանով, որը համապատասխանում է մերձևանյան միության գոյության երկրորդ («վաղհայկական») փուլին։ Իսկ նրանց գլխավորած ցեղամիության մեջ ընդգրկված ցեղախմբի (նախկինում տարածագում և տարալեկու ցեղերի) վերածումը կազմավորված հայ ժողովրդի ազգագրական խմբերից մեկին վերջնականապես տեղի է ունեցել մ. թ. ա. IV—III դդ., այսինքն՝ այն ժամանակաշրջանում, երբ գոյություն ուներ Երվանդունիների Այրարատյան թագավորությունը։

(երկիր)»՝ պարունակելով նաև «հարավի (երկիր)» իմաստը։ Շամ (Ասորիք, Սիրիա) տեղանունը համապատասխանաբար նշանակում է «ձախի (երկիր)» կամ «հյուսիսի (երկիր)»։ Այս անվանումները հիմնավորվում են նրանով, որ Եմենը գտնվում է Արաբիայի հարավում, իսկ Շամ-Ասորիքը՝ նրանից հյուսիս (տե՛ս Е. А. Беляев, Арабы, ислам и Арабский халифат в раннее средневековье, М., 1966, էջ 36)։ Հմմտ. նաև հին հնդկերեն dakṣina (= հուն. δεξιός, լատ. dexter «աջ») բառի զույգ իմաստները՝ «հարավ» և «աջ»։

56 Մ. թ. ա. II դարի սկզբի Հայաստանի բնակչությանը Ստրաբոնը բնութագրում է «բոլորը միալեզու են» բառերով (Strabo, XI, 14, 5)։

57 Է. Կավենյակը Հայկական լեռնաշխարհում հայերենի տարածման փաստը կապում է հինթրակյան ցեղերից հատկապես տրերների հետ (E. Cavaignac, L'origine des Armeniens, „Revue hittite et asianique", XXI, 72, 1963, էջ 47—54)։ Այս տեսակետն ընդունելիս պետք է նկատի ունենալ, որ ինչպես տրերները, այնպես էլ թրակական և փռյուգական ուրիշ ցեղեր Հայկական լեռնաշխարհում հայերենակիր ցեղերի նման կարող էին կարևոր դեր խաղալ տեղի բազմալեզու բնակչության համար հայերենը նախ միջցեղային հաղորդակցման միջոց, ապա և՝ համընդհանուր խոսակցական լեզու դարձնելու գործում։

СОЮЗ ПРИСЕВАНСКИХ ПЛЕМЕН НА СЕВЕРО-ВОСТОКЕ АРМЯНСКОГО НАГОРЬЯ (VI—V вв. до н. э.)

С. Г. ПЕТРОСЯН

(Резюме)

В урартских клинообразных надписях VIII—VII вв. до н. э. упоминается племенной союз Уедури-Этиуни, локализуемый в бассейне озера Севан. Этот союз после падения Урарту укрепился и стал расширяться во всех направлениях. В присеванском объединении господствующее положение занимало племя *uel (арм. *гел, գեղ*), которое первоначально жило в стране *Уеликуни* (арм. *Գեղարունի*) на западном берегу озера. В древнеармянских эпических сказаниях эпонимом племени гел и страны Гелакуни является *Гелам* (*Գեղամ*<*гел*+*ам*). Он считается отцом и предком эпонимов тех нахарарских родов древней Армении, которые происходят от родо-племенной знати присеванского союза.

В этот племенной союз на северо-востоке Армянского нагорья входили как представители древнекавказского автохтонного населения, так и пришлые фрако-фригийские и родственные им протоармянские племена (т. е. племена—носители протоармянского языка). Позже, во время существования Айраратского царства Ервандидов (IV—III вв. до н. э.), все они вошли в состав армянского народа, образовав особую этнографическую группу. Может быть, именно эта северо-восточная этнографическая группа древних армян называлась *гелни, гелник* (*գեղնի, գեղնիկ՝ -ու, -ուկ* — этнонимические суффиксы) по имени гелов, главного племени присеванского объединения. Интересно, что в словаре Иеремии эти имена приводятся как синонимы самоназвания армян (*Հայ*).